ՔԱՂԱՔԱՑԻՆ, ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍԸ ԵՎ ԳԻՏՆԱԿԱՆԸ

Լրացավ հայտնի պատմաբան-միջազգայնագետ, գիտնական, հասարակական, քաղաքական գործիչ Ստեփան Ստեփանյանի 80 տարին: Երբ հայացք ես նետում Ստեփան Ստեփանյան քաղաքացու կյանքի և հրապարակախոսի ու պատմաբանի անցած շուրջ կեսդարյա ուղուն, ասել է թե՝ վաստակի բովանդակությանը, զգում ես, որ միայն անմնացորդ նվիրումով է նա հնարավոր դարձրել այն, ինչ կատարել և այսօր էլ շարունակում է կատարել:

Ստեփան Սմբատի Ստեփանյանը ծնվել է 1927 թ. նոյեմբերի 20-ին Խորհրդային Հայաստանի Արթիկ քաղաքում, գյուղացու ընտանիքում: Նախնիները գաղթել են Արևմտյան Հայաստանի Կան բնակավայրից, որը գտնվում էր Էրզրումի (Կարին) մոտակայքում:

1935 թ. ընդունվել է Արթիկի N 2 միջնակարգ դպրոցը և այն ավարտել 1945 թ., ոսկե մեդալով: Նախ ընդունվել է Երևանի պոլիտեխնիկական, այնուհետև՝ բժշկական ինստիտուտ, բայց երկուսում էլ սովորել է մեկական ամիս: Երբ նույն տարում Երևանի պետական համալսարանում բացվում է միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, վերջնականապես որոշում է ուսանել այնտեղ: 1950 թ., համալսարանն ավարտելուց հետո, որպես միջազգայնագետ դասախոս, աշխատել է Հայաստանի կոմկուսի կենտկոմում՝ մինչև 1976 թ.: Ուսանողական տարիներից Ստեփանյանին գրավել են երկու ասպարեզ՝ հրապարակախոսությունը և գիտությունը, որոնց հետ էլ այդ «մտերմությունը» շարունակել է ողջ կյանքի ընթացքում: Ավելի քան երեք տասնամյակ (1958-1991 թթ.) նա աշխատել է Հայաստանի հեռուստատեսությունում՝ որպես քաղաքական մեկնաբան, և հանդիսացել ժամանակի լավագույն մեկնաբանը:

1960-1980-ական թթ. նա հայ հեռուստադիտողին էր հասցնում միջազգային կարևոր իրադարձությունների մասին իր կողմնորոշիչ խոսքն ու ինքնատիպ մեկնաբանությունը: Կարողացել է քաղաքական-հրապարակախոսական աշխատանքի հետ զուգակցել գիտականն ու մանկավարժականը: Նա պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան է ստացել 1965 թ., Մոսկվայում: Ստեփանյանը Հայկական հարցի, Հայոց ցեղասպանության հարաբերությունների վերաբերյալ երկարատև ուսումնասիրություններ է կատարել Հայաստանի,Վրաստանի

և Ռուսաստանի պետական արխիվներում, իսկ գերմաներենի խոր իմացությունը հնարավորություն է տվել 1973-1975 թթ. աշխատելու ԳԴՀ-ի արխիվներում ու գրադարաններում: Հայտնաբերած փաստաթղթերի ու նյութերի հիման վրա գրել է և 1975 թ. հաջողությամբ պաշտպանել Մոսկվայի հասարակական գիտությունների ակադեմիայում: Հինգ տարի հետո (1980 թ.) գիտնականին շնորհվում է պրոֆեսորի կոչում: Նա երկար տարիներ, 1976-1994 թվականներին, պրոֆեսորի և ամբիոնի վարիչի պաշտոններ է զբաղեցրել Երևանի պոլիտեխնիկական, գյուղատնտեսական և բժշկական ինստիտուտներում, իսկ այժմ Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժնի վարիչն է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

Նշանակալի է Ստ. Ստեփանյանի վաստակը Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրման բնագավառում: Նա հայ պատմաբաններից առաջինն է, որ ուսումնասիրելով Հայոց ցեղասպանության վերաբերյալ գերմանական արխիվները և աղբյուրները, հայտնաբերված փաստաթղթերի նյութերի հիման վրա ստեղծել է մի շարք աշխատություններ, որոնք նշանակալի ներդրում են հայագիտության մեջ: Իր հրապարակած փաստաթղթերի ժողովածուի մեջ, աշխատություններում և հոդվածներում պատմաբանը բացահայտել է վերջին երկու դարերի սահմանագլխում օսմանյան պետություն, հատկապես երիտթուրքերի, ինչպես նաև քեմալականների կողմից պետականորեն մշակված ծրագրերը:

«Գերմանական աղբյուրները հայերի ցեղասպանության մասին» ժողովածուի 1-ին հատորում, «Հայաստանը իմպերիալիստական Գերմանիայի քաղաքականության մեջ (19-րդ դարի վերջ-20-րդ դարի սկիզբ)» մենագրությունում, «Թալեաթ փաշայի դատավարությունը» (ռուսերեն,Մոսկվա 1992 թ.), «Արմին Վեգները և Էրնստ Վերները հայոց ցեղասպանության մասին□ գրքերում և բազմաթիվ այլ աշխատություններում հեղինակը անառարկելի է համարում այն իրողությունը, որ Գերմանիան Թուրքիայի թիկունքին էր կանգնած ցեղասպանության ծրագրի մշակման և իրականացման ամբողջ ժամանակաշրջանում: Ստեփանյանը բոլորովին սնանկ է համարում գերմանական պաշտոնական դիվանագիտության և պատմագիտության այն պնդումները, թե իբր Գերմանիան պատերազմի նախօրյակին Հայկական հարցում վարել է չեզոքության քաղաքականություն: Հայկական կոտորածների ամենաեռուն շրջանում Գերմանիայի կառավարող շրջանները չէին խորշում Կ. Պոլսում հիմնելու «թուրք-գերմանական բարեկամության տուն», որի նախագահն է դառնում հայ ժողովրդի դահիճներից մեկը՝ Էնվեր փաշան: Ստ. Ստեփան-յանի հրապարակած փաստաթղթերը համառ մեղադրանքներ են: Դրանք ցույց են տալիս, որ վաղ թե ուշ ճշմարտությունը կհաղթանակի և կեղծարարները կկանգնեն պատմության դատաստանի առջև, որ աշխարհում ոչ մի օրենք, այդ թվում և վաղեմության իրավունքը, չի կարող փրկել ցեղասպաններին, վերջիններիս չի կարելի զիջել կամ ներել:

Ստ. Ստեփանյանի աշխատությունները բարձր են գնահատել ոչ միայն հայ, այլև ռուս և գերմանացի նշանավոր պատմաբանները: Ականավոր պատմաբան, նախկին ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ի. Մինցը Ստ. Ստեփանյանի «Հայաստանը իմպերիալիստական Գերմանիայի քաղաքականության մեջ» ուսումնասիրության նախաբանում մասնավորապես, գրել է. «Երբ խոսքը վերաբերում է գիտական

աշխատանքին, հիմնավոր հարց է դառնում ոչ միայն այն, թե ինչ է իրենից ներկայացնում տվյալ աշխատությունը, այլ նաև այն, թե ինչ նորություն է տալիս պատմագրությանը, ինչումն է կայանում նրա գիտական արժեքը: Ներկայումս Ստ. Ստեփանյանի աշխատության շնորհիվ գերմանական իմպերիալիզմի գիշատիչ և ագրեսիվ քաղաքականությանը վերաբերող գրականության մեջ դրված են նոր փաստագրական նյութեր, որոնց մեջ գլխավորը գերմանական արխիվային փաստաթղթերն են: Այդ ամենով Ստ. Ստեփանյանի աշխատությունը նոր ներդրում է գերմանական իմպերիալիզմի արտաքին քաղաքականության մասին գիտության մեջ»:

Ստ. Ստեփանյանի աշխատանքներին բարձր գնահատական են տվել ռուս հայտնի պատմաբան Ի. Գալկինը, Լայպցիգի համալսարանի ամբիոնի վարիչ Է. Վերները, գերմանացի պատմաբան Բ. Բրանտեսը, հայագետ Թ. Հոֆմանը: Ուշագրավ է, որ հայ, ռուս և գերմանացի պատմաբանները միաժամանակ այն կարծիքն են հայտնել, որ Ստ. Ստեփանյանը հաստատել և զարգացրել է պատմագիտական և քաղաքագիտական հետևյալ ուղղություններն ու հայեցակետերը՝ ա) հայերի կոտորածները Օսմանյան Թուրքիայի իշխանությունների կողմից սկսվել են Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում և Թուրքիայի հայաբնակ վայրերում՝ նրանց տիրապետության ժամանակներից, բ) զանգվածային կոտորածները, ցեղասպանությունը սկզբում իրագործվել է XIX դ. 90-ական թթ. սուլթանական Թուրքիայի պետականորեն մշակված ծրագրով, գ) Մեծ եղեռնը իրականացվել է երիտթուրքերի ծրագրով և պանթուրքիզմի գաղափարախոսության, «Մեծ Թուրանի» ստեղծման քաղաքականության դրսևորումն է, դ) արևմտյան մեծ տերությունները՝ Գերմանիան, Անգլիան մեղսակից են հայոց ցեղասպանությանը, ե) ցեղասպանության կանխման և բացառման համար անհրաժեշտ է վերացնել նրա հետևանքները, և վերջապես՝ զ) Հայկական հարցում և Հայոց ցեղասպանության դեպքում դրա իմաստն այն է, որ պետք է հատուցել հայ ժողովրդին պատճառած նյութական և բարոյական վնասները, նրան վերադարձնել թուրքերի կողմից զավթված հայրենիքը՝ Արևմտյան Հայաստանը:

Ստ. Ստեփանյանը տասնամյակներ ի վեր զբաղվում է մանկավարժական և հասարակական գործունեությամբ, որի համար նա պարգևատրվել է «Պատվո նշան» երկու շքանշաններով (1967, 1986 թթ.), Վավիլովի անվան (1987 թ.) և Խաղաղության գերմանական խորհրդի (1985 թ.) մեդալներով: Նա է Հայոց ցեղասպանության 80-ամյակի նախօրյակին հավաքել և պատրաստել այն բոլոր արխիվային նյութերն ու համապատասխան փաստաթղթերը, գրել այն պատմական տեղեկանքն ու որոշման նախագիծը, որոնք պաշտոնապես ուղարկվել են Ռուսաստան և հիմք են ծառայել Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման մասին ՌԴ Պետական դումայի հայտարարության համար:

Ցեղասպանության ճանաչման և կանխարգելման բնագավառում ունեցած ներդրման համար 1995 թ. գիտնականն արժանացել է ՀՀ նախագահի և այնուհետև ՀՀ ԳԱԱ նախագահի պատվոգրերի և այլ պարգևների: Նա ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի և «Հրաչյա Աճառյան» համալսարանի գիտական խորհուրդների անդամ է: Պատմաբանի և քաղաքագետիլայն պատրաստությամբ, միջազգային կացությունը և մեր տարածաշրջանում ուժերի հարաբերակցությունը վերլուծելու և ընդհանրացնելու կարողությամբ նա ելնում է այն ճշմարտությունից, որ Հայաստանի Հանրապետությունը ոչ միայն սոցիալական արդար պետություն դառնա-

լու կայուն հիմքեր պիտի ունենա, այլև պետության գոյատևումն անվտանգ դարձնելու արտաքին հենակետեր: Նրա խորին համոզմունքն այն է, որ բոլոր հնարավոր հենակետերից ամենահուսալին և իրատեսականը Ռուսաստանն է: Ստ. Ստեփանյանը միաժամանակ զարգացման սոցիալիստական կողմնորոշում ունեցող բոլոր ուժերի համախմբման կողմնակից է:

Ստ. Ստեփանյանը մտավորական է այդ բառի իսկական իմաստով: Նա այն գործիչներից է, որոնք, բոլորանվեր, ծառայել գիտեն իրենց ծնող ու սնող ժողովրդին: Ցանկանք 80-ամյա ազնիվ քաղաքացուն, անզուգական ընկերոջը, երկար տարիների հեռուստատեսության քաղաքական մեկնաբանին, հրապարակախոս-հասարակական գործչին ու լրջախոհ գիտնականին կյանքի ու գործի, ստեղծագործական նոր խիզա- խումներ:

ԽԱՌԱՏՅԱՆ Ա. Ա.
պատմագիտության դոկտոր,

ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ Ն. Բ.
պատմագիտության դոկտոր,